


ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ  
**Ե. ՓՈՐՈՍԵԱՆ**  
 ՆԱՄԱԿ ԿՈՄ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ  
 ՊԵՏԻ ԵՆՆՆԵՆ ԱՐ  
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ լրագրի  
 ԳԱԶԻՐԷ (Հասպայանի)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



**Լ Ր Ա Գ Ի Ր**

**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

ԵԿԻՍՏՈՒԿ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Տրամք	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ ԿԱՆԽԿ Է  
 ԵՒ ԵՂՔԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ  
 ԽՈՒՐԱԳՐՈՒՅԵԱՆԱ ՎՐԱՅ:

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք ԵՍ չ'են օրուր:

**ԵՐԲԵՄՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԵՍ**

**ՄԵՐ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

— Եթէ մեր . . . ուն գաղափարին հակառակ չէ, սիրով կ'ընդունիմ ձեր յօդուածը:

Այսպէս վերջացաւ մեր խօսակցութիւնը, եւ աւելորդ է ըսել թէ՛ յօդուածն ալ լոյս չտեսաւ. վասն զի մերժեցի եղած առաջարկութիւնը:

Կրնայի եւ պէտք էր պատասխանել իմ խօսակցին:

— Պարո՛ն, եթէ ձեր կամ մեր . . . ուն գաղափարին ճշգրտեան համոզուած ես, ինչո՞ւ կը վարկաբան ընդդիմախօսութենէ, չէ՞ մի որ ճշմարտութիւնը ա՛լ աւելի կը փայլի վիճարանութեամբ. իսկ եթէ այնպիսի համոզում մը չ'ունիս՝ զայն ինչո՞ւ կը պաշտպանես եւ ի՞նչ գեր կը խաղչաս ազգին մէջ:

Բայց ապշուծիւն մը եկաւ վրաս, եւ առիքալեցի:

Իմ կարծեօքս կամաւոր ստորկիներու ամենասնաբան ամենալավան է այն անձը, որ գաղափարի, մտածման պէս նուիրական ձիրք մը, երկրորդի մը տրամադրութեան տակ կը դնէ:

Հրապարակագիր մը իրաւունք ունի գրելու ինչ որ կը կարծէ թէ հանրութեան օգտակար է, բայց լրագրագետ մը իրաւունք չ'ունի մերժելու՝ ինչ որ իր կամ ընթերցողաց մի մասին գաղափարին հակառակ է:

Անձ մը որ լրագիր մը կը հաստատէ, մեծ եւ նուիրական պարտականութիւն մը կ'ստանձնէ հանդէպ ընկերութեան, ա՛յն լուրիս խոստումով որ՝ զայն չէ՛ թէ իր ըմբռնումին գրի ընելու պիտի ճգնի, անկէ ծածկելով վէճի առարկայ եղած նիւթի մը մէջ մի կողմը, այլ անկեղծօրէն անոր առջև պիտի պարզէ հասարակութեան թեր ու դէմ կարծիքը:

Լրագիրը դատարան մ'է, որուն դատաւորը ժողովուրդն է եւ ոչ լրագրագետը: Հարկ է ուրեմն որ երկու կողմին պատճառարանութիւնը հասնին դատաւորին ականջին:

Ժողովուրդը իր ստակին փոխարէն, կուզէ լաւ տեղեակ ըլլալ թէ ի՞նչ կ'անցնի կը գառնայ ինքորոյ մը, գէպքի մը շուրջը, որմէ կախում ունի իր բարօրութիւնը, թերեւս իր ապագայն: Այսպիսի պարագայի մը մէջ ճշմարտութիւնը կամ կարծիքներու մէկ մասը քողարկել պաշտօնի զեղծում մ'է պարզապէս, հետեւաբար դատապարտելի:

Անիրաւութիւն է չարակամական ոգով ներկայել մի գովելի արարքը անհատի մը՝ որ իրաւամբ միշտ սագտանելի գտնուած է: Նմանապէս քծնութիւն է մեղմացնելու ջանալ մի դարձելի ընթացքը անձի մը՝ որ անստղիտ ճանչցուած է: Յենդով սա ընդհանուր կանոնին վրայ որ ամենէն վատթար ինչպէս ամենէն բարի անձ մը կրնան իրենց կեանքին մէջ գէթ մի անգամ ուղելով կամ չուղելով՝ բարի կամ յոռի վարմունք մ'ունեցած ըլլալ, լրագրագետը պարտի՛ ի պահանջի հարկին՝ եղբիւրներ յայտնել ինչպէս որ է, առանց կսնելու:

Խաղաղական ոգւոյ եւ առանց դերակատարներու խնդրէն դուրս արարքներուն ակնարկութիւններ ընելու: Անշուշտ լրագրագետն ալ իր անհատական իրաւունքն ունի իր գաղափարը յայտնելու, բայց այս փափուկ գործողութիւնը պարտի ըլլալ առանց կրից, եւ՝ մանաւանդ թէ՛ իրեն եւ թէ՛ իր համախոհներուն հակառակ խորհողներուն առանց իր սրտանկները գոցելու:

Պէտք է, կ'ըսենք, ժողովուրդը լուսաւորել, եւ միեւնոյն ժամանակ լուսաւորուելու միակ միջոցին առջև թուժեր կը կանգնենք: Երբեմն ալ, ո՛ն, շատ անգամ ալ, բարբաջանք կարգալով անոր ստակը միայն առնելու կը նայինք:

Ըսել չենք ուզեր թէ գնահատելի բացառութիւններ չկան մեր մէջ. անտարակոյս ունինք պարտաճանաչ խմբագրագետներ, բայց՝ դժբաղդաբար՝ խիստ փոքր մաս մը կը կազմեն այնպիսիները:

Մի քանի խօսք ալ մեր լրագրաց ծրագրոյն վրայ:

Լրագիրը դատարան ըլլալէն զատ նաեւ կըրթարան մ'է: Անոր պարունակութիւնը մեծապէս կ'ազդէ իր ընթերցողաց վրայ: Ժողովուրդը մեծ համարում ունի լրագրաց, հետեւաբար լրագրագետաց վրայ. ուստի պէտք է որ պատասխանատուք խղճի մտօք ընտրեն իրենց նիւթը, որպէսզի ընտանեաց հայրը կարող ըլլայ՝ առանց որեւէ վարանման՝ դնել զայն իր կնոջ եւ զաւակաց ձեռքին մէջ:

Լրագիրը ուղղուած է ամեն դասակարգի անձանց. հետեւաբար պարունակութիւնը պէտք է ըլլայ դրական եւ գործնականապէս գրական, այնպէս որ ամենատեղեան իսկ կարող ըլլայ հասկնալու առանց այլեւայլ բառարաններու դիմելու հարկադրութեան: Դժուարահասկնալի ոճեր, բառադարձութիւններ անտեղի են լրագրաց սրտանկներուն մէջ:

Ազգային, քաղաքական, կրօնական (որ բոլորովին բարձի թողի եղած է), արհեստական, բժշկական, գեղարուեստական եւլն. եւլն. լուրջ եւ ամփոփ լուրեր, գրութիւններ մեծ ակնորժանօք կը կարդացուին, եթէ՛ ինչպէս ըսուեցաւ՝ գրուած են առանց իմաստակութեան, եւ առանց կողմնակցութեան ոգւոյ:

Մանաւանդ ոչ ամենօրեայ եւ փոքրածաւալ լրագիրը, որ նախապէս յայտնուած մասնաւոր ծրագիր մը, ուղղութիւն մը չունի, ժողովուրդին է բացարձակապէս, եւ պէտք է յարգել իրաքանչիւր անհատին իրաւունքը:

Այս է իմ կարծիքս մեր լրագրութեան մասին:

Պ.

**Հ Ի Ն Դ Ե Մ Ք Ե Ր**

**ՅԱՍՈՒԼԵԱԾԵԱՆ**

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Անա սանձանը երկու մե՛ծ գործիչներու — ուսուցչին եւ գերասանին — կեանքի ու գործունէութեան, զոր կը գծեն ցարդ մեզմէ շատերը . . . : Եւ սարսափելի՛ վախճանը՝ որ կը վերապահչ

ուի շատ անգամ մարդկութեան այս երկու մե՛ծ դաստիարակներուն . . . : Հիւանդանոցը՝ արք կը նահատակուին վարձկան ձեռքերու տակա՛յ չկա՛յ բարեկամ մը անարին մօտ որ քաջալերէ, միտքարէ, խօսքով մը, ժպիտով մը, արցունքով մը գէթ փոքր ինչ քաղցրացնէ սանդուած վիճակին դառնութիւնը . . . Եւ մանք՝ զգալով այլ դժբաղդները առանձին, լքեալ, իր բոլոր դարձուրիլ անհաւերքները հագած, մահազար արած, պօօիլ՝ համարձակ, աւելի՛ ստակալի կը մօտենայ անոնց . . . : Վարձկան ձեռքեր վերջին պահուն կը գոցեն այն աչքերը՝ որոնք դիչըր ցերեկ թողլիք երազ ու գորքերու վրայ հալեցուցեր են իրենց լոյսը . . . : Այն աչքերը՝ որոնք այնքան սիրով ու գուրգուրանքով հանգչեր են տարիներէ ի վեր իրենց թանկագին սրտի՛ զաւակներուն վրայ . . . :

Սակայն այս չէ՛ միթէ ճակատագիրը ամեն անոնց՝ որ իրենց անձը նուիրելի են սեւէ վաւմ նպատակի . . . որ իրենց համար ապրելէ չա՛տ աւելի օրօրներու համար ապրել են . . . : Ո՛չ ապաքէն տանջանք, հալածանք, զոհողութեան փոխարէն ապերախութիւն եղեր է իրենց քեփիւնը, ամեն դարերու եւ ամեն ժամանակներու մէջ . . . :

Տխուր է ասոնք մտածելը . . . Եւ աւելի՛ սորխուր է մանաւանդ հրապարակաւ այս մեղի ոչ պատուաբեր ճշմարտութիւնները խօսիլ առ . . . :

Անա ե՛ւ Տիգրանիւսի անձը վերջին տարեգրուած գոհերու շարքին մէջ . . . : Անա՛ արուեստագէտ մըն ալ որ տարիներ Հայ բեմը ոգեւորեր, Հայ բեմին վրայ մաղերը ճեղմեցուցեր է . . . :

Ներկայացնելով կեանքը այնպէս՝ ինչպէս բո պէտք էր եղած ըլլար, արդի իրական ազեղ կեանքի դէմ տարիներով յամառ կռիւ է մղեր, եւ այսօր՝ այդ երկար ու ցաւալի պայքարէն մարմնը տկար, թէպէտ հողին մի՛շտ յօժար, կուրքը ջախջախուած, նիւթական ու բարոյական օգնութեան կարօտ, կը դառնայ դիրկը այն հայութեան՝ որու գեղարուեստի նեղ երկնքին վրայ փայլող սակաւաթիւ աստղերէն մին եղած է . . . : Ի՛նչ շնորհնելութիւն ըրինք իրեն . . . :

Ցաւալի է յիշել թէ Աղէքսանդրիոյ Հայ երկտասարդութիւնը չ'ճանչցաւ, կամ չ'գիտցաւ ճանչնալ մե՛ծ ողբերգուին արժանիքը: Ալ ի՞նչ ըսել . . . երբ մեր ճոռ կոչուած սերունդը՝ որոյ վրայ կը հանգչին մեր ամենաքաղցր յոյսերը, անտարբեր կը կենայ հանդէպ մեծ տաղանդի մը՝ զոր պէտք էր յարգանքօք ողջունած ըլլար . . . :

Աւա՛ղ, անցեալներս «Արշալոյս»ի մէջ կ'արգաւակը, թէ ուրիշնր . . . : Ի հարկէ շատ անկի պիտի սիրէ, հոգ ու խնամ պիտի տանի իրենին, քան օտարի զաւակին. դա՛ ընական է: Ի՛նչ մը անձնասէր ըլլանք: Անձնասիրութիւնը գեղեցիկ յատկութիւն մըն է, երբ անհատական կեանքէ գուրս՝ ազգայնութեան կեանքի շուրջը կը դառնայ: Մե՛րը սիրենք, մե՛րը յարգենք, մե՛րը պատուենք, առանց սակայն ուրիշներ ատելու . . . : Մերը միայն մեզի կը մնայ, վասնզի մեր արիւնէն, մեր մարմինէն է նա . . . :

Այս մտածումները յուզեցին ուղեղո Յատուեաճեանի հետ ունեցած տեսակցութեանս միջոցին: Համակրելի ողբերգուն քաղաքակրթուած Եւրոպայի արիւնքէն կը հասնի Ափրիկեան աւազուտ

դացի յօդուած մը որ Պէնիւսի տուած մէկ ներկայացման վրայ խօսելով, կը յաւելուր թէ՛ ամբողջ թատրոնի սրանք գրեթէ պարագայ էր այդ իրիկուն. մինչդեռ անդին օտարներու թատրոնները լի էին հայերով!!! : Տխուր երեւոյթ ... :

Ժամանակ մը այսպէս չէր սակայն : Պօլիս, հոծ հայութիւն մը կը վիտար այն թատրոններուն մէջ՝ ուր Հայ խումբերը ներկայացում կուտային : Այսօր՝ նոյն Հայութիւնն է դարձեալ որ կը լքանէ իր թատրոնը. այսօր՝ որ ամեն ժամանակներէ աւելի պէտք ունինք դիրար քաջալերելու, մեր արուեստագէտներուն ուժ ու եռանդ ներշնչելու, որպէսզի ծլին, ուճանան, ծաղկին մեր տաղանդները, ծնին եւ ապրին անոնք մէկ խօսքով :

Այդ կըրճանիկ ժամանակներուն մէջ բաւական թուով արուեստագէտներ ալ ունէինք. ի՞նչ էր պատճառը ... : Վասնզի Հայ հասարակութիւնը իր թէ՛ բարոյական եւ թէ՛ նիւթական ուժերովը ձեռնտու կ'ըլլար անոնց, կը քաջալերէր, կը ծափահարէր, կը գնահատէր եւ միեւնոյն ժամանակ առատ առատ կը վարձատրէր : Պէտք է խոստովանել թէ՛ միայն գովեստն ու ծափահարութիւնը չեն բաւեր տաղանդ մը կատարելագործելու : Նիւթական ուժը այն ամենակարող զսպանակն է որ գլխաւորաբար կը նպաստէ բարոյական ուժերու լարումին : Դժբաղդաբար շատ անգամներ փորձով կը տեսնենք թէ՛ առանց նիւթականի, բարոյականը չէ՛ եւ չէ՛ կարող իր որոշ բարձրութեանը հասնիլ ... :

Վերջերս օրըստօրէ մեր արուեստագէտները կը նուազին. գնացողներուն տեղ նորեր չեն երեւար ասպարէզի վրայ. ո՞ր են Գարազաշաններու, Արուսեակի, Ադամեանի, Դրեանցի յաջորդները ... : Ո՞վ է մեղաւորը երբ այսօր կ'իմանանք թէ թատրոնի սիրով ջերմապէս վառուած հայ երիտասարդ մը գնացեր մտեր է Եւրոպական նշանաւոր խումբի մը մէջ ... : Այդ երիտասարդը մեղադրելու պատրաստ ենք, իր ազգային արժանապատուութիւնը քիչ ճանչցած ըլլալուն համար, իսկ մենք զմեզ օր մը մեղադրե՞ր ենք արդեօք այնքան քիչ գնահատելուս համար մերինները ... :

Օտարին ամենէն աննշան խաղերը, իսկպէս ներկայացումներու թափթփուքներ շատ անգամ, մի՛շտ մերիններէն աւելի լաւ ու կատարեալ գտնելու տեսակ մը նախապաշարու մով, կ'որբացնենք մեր սեփական թատրոնը : Օտարը կը քաջալերենք, կը գովենք ու կը վարձատրենք, եւ այսու՛ կը շլատենք մեր ազգային դերասաններու կորովը, եռանդը, աւելնը եւ տաղանդն ալ ... :

Օտարասիրութիւնը մեր տունը քանդեց, տակաւին սիրե՞նք օտարը, ան մեր մուտք մտնեց ... : Ի՞նչ օգուտ ունի մեզի. չէ՞ որ օր մը մեր քեզին խնդալով պիտի թողու հեռանայ, մեր ծափահարութիւններուն հետ՝ դրամսիս ալ խելով ... : Եւ մարդ բնութեան օրէնքով առաջնորդուած, զո՞վ աւելի պարտաւորուած է սիրելու, իրմէ՞ ծնած զաւակը, թէ՛ ուրիշինը ... : Ի հարկէ շատ աւելի պիտի սիրէ, հոգ ու խնամ պիտի տանի իրենին, քան օտարի զաւակին. դա՛ բնական է : Ի՞նչ մը անձնասէր ըլլանք : Անձնասիրութիւնը գեղեցիկ յատկութիւն մըն է, երբ անհատական կեանքէ զուրս՝ ազգայնութեան կեանքի շուրջը կը դառնայ : Մե՛րը սիրենք, մի՛րը յարգենք, մի՛րը պատուենք, առանց սակայն ուրիշինը ատելու ... : Մերը միայն մեզի կը մնայ, վասնզի մեր արիւնէն, մեր մարմնէն է նա ... :

Այս մտածումները յուզեցին ուղեղս Յասուլեանի հետ ունեցած տեսակցութեանս միջոցին : Համակրելի ողբերգուն քաղաքակրթուած Եւրոպայի ավուներէն կը հասնի Ասիական աւազուտ կէս-վայրենի ցամաքը, իր հիւանդ, մաշուած կուրծքին դարման փնտռելու : Աշխատի՛նք մեր նիւթական ու բարոյական միջոցներուն ներածին չափ օգտակար ըլլալ անոր, որպէսզի ժամ առ ժամ վերականգնէ իր քայքայուած առողջութիւնը ... : Աշխատի՛նք քանի դեռ ժամանակ կայ ... : ցորչափ մեր ձեռքն է դեռ իր կեանքը փրկել ... :

« Գնա՛ մտեր, եկո՛ւ սիրեմ » ի ընթացքը չունենանք անոր ալ նկատմամբ, ինչպէս ունեցեր ենք շատերու համար : Անուշահոտ ծաղկէ սրտակները, արծաթապատ փառաւոր դազաղները, հոծ բազմութիւնը, շողջողուն դամբանակալները օգուտ չունենալէ զատ՝ աւելորդ ալ են : ատոնք կենդան

նութիւն չեն տար դազաղին մէջ ոչնչացած, տաղանդին եւ մարմինը որ քիչ օրերով մեր սեփական բնին վրայ դեռ շատ ու շատ անգամներ տեսնենք ու վայելենք մեր սիրելի վարպետը, առողջութեամբ, կեանքով զեղուն, խանդով ու եռանդով մշտալաւ :

Աղէքսանդրիա ՄԱՌԻ  
ԾԱՆՕԹ. — Թերթիս առաջին կրեւի երրորդ սիւնակին վարէն սկսելով 14 տողերը սխալ զԵՐուած են, հետեւաբար երբ Հին ԴէՄՔԵՐ յօդուածին աւա՛ղ էր անցեալներս «Արեալոյս» մեջ կարհատուածին հասնի ընթերցողը, պէտք է երկրորդ երեսը դարձնել :

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Մեզ լուր կը տրուի թէ՛ կիրակի օր 19/31 դեկտեմբեր Գաւառ. վարչութեան Երեսփոխանական Ժողովն ի նիստ գումարուած է, ընդ Ատենապետութեամբ Վ. Տիգրան փաշայի և առաջնութիւն տալով Առաջնորդի մը ընտրութեան խնդրոյն, Գեր. Տէր Եղիշէ Եպիսկոպոս Դուրեան, Եպիսկոպոս Առաջնորդ ընտրած, և ընտրութեան այս արդիւնքը հեռագրած է ի Պատրիարքարան :

Նորին Կերպաստուութիւն Եղիշէ Եպիսկոպոս, քանի տարիներէ ի վեր Արմաշի փոխվանահայր, հայ վեղարաւորներուն մէջ շատ կարևոր տեղ մը գրաւած է իրաւամբ՝ իր հմտալից երկասիրութիւններովը և այլ շատ մը արժանընտիր յատկութիւններով :

Երեսփոխան Ժողովոյ այս ընտրութիւնը, առանց շատ մը ձեականութեանց պակասները ի նկատ առնելու, պիտի կրնանք ըսել թէ՛ յարմարաւոր է. միայն թէ պարագայ մը՝ որ մեր ուշադրութենէն չենք ուզեր վրիպեցնել, այն է թէ, արդեօք Դուրեան Եպիսկոպոս Արմաշի խաղաղիկ կեանքը թողլով պիտի հաճի՞ ընդունիլ Եպիսկոպոս Առաջնորդութիւնը՝ որ հիմակ ոչ նուազ տաղտկալից է. և եթէ ընդունի իսկ, պիտի կրնայ՝ զինք սիրողներուն մտքին մէջ իր արժանիքին վրայ կազմուած դաղափարը նոյնը պահել : Ասիկայ ապագան միայն պիտի խոստովանի : Մենք կը սիրենք յուսալ թէ՛ Նորին Կերպաստուութիւն, եթէ ընդունի իրեն առաջարկուած այս ամենափափուկ պաշտօնը, առիթ պիտի ունենանք այս էջերուն մէջ իր գործունէութեանց և Ժողովրդասիրութեան մասին ներբողներ արձանագրելու :

Նոյն օրը Որբասիրաց Ընկերութիւնն ալ, համաձայն թերթիս մէջ եղած յայտարարութեան, Ընդհ. Ժողով գումարեց Արժ. Տէր Եղիշի Գահանայ Պալուստոյ բնակարանին մէջ :

Անգամներէն 26 հոգի ներկայ էին : Ընդհ. Ժողովոյ Դիւանն ատենը բանալով, օրակարգի խնդիրները հետզհետէ կարգաւ ձեռք առաւ : Ամենէն սուս կարգացուեցաւ նախորդ նստի ատենագրութիւնը՝ և վաւերացուեցաւ ինչ ինչ լուսարանութիւններ տրուելէ վերջ :

Ապա օրակարգի խնդիրներն մի առ մի նկատողութեան առնուելով պատշաճ որոշումները տրուեցաւ :

Ընտրութեանց ձեռնարկելէ առաջ, Դիւանը 14-16 ստորագրութեամբ նամակ մը ընթերցման տուաւ, որ ստորագրուած էր Ընկերութեան մինչև ցարդ անգամ գրուելով չ'վճարողներէ, մասամբ վճարողներէ և նախախտնետէ : Ընդհ. Ժողով այնգամբ՝ այդ նամակին պարունակութիւնը թէև նամակ կոչուելու արժանիքէն բոլորովին զուրկ տեսան, բայց զայն ստորագրողներուն բարոյական դաս մը աւանդելու նպատակաւ, յանձնարարեցին իրենց ձեռնհաս մէկ անդամին, որպէս զի հրապարակային դրական պայքար մը սկսելով ճանչցունէ անոնց մեծածեծ սխալները, խարէութեան զոհ գացած ըլլալին և մանաւանդ բարեգործական դիմակի տակ խառնակութիւններ սերմանելու նպատակին :

Ընտրութիւնք հետեւեալ արդիւնքը ունեցան :

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՒԱՆ
- Տիարք  
Պետրոս Կարապետեան Ա. Ատենապետ  
Նշան Մալումեան Բ. " "  
Սմբատ Բիւրատ Ա. Ատենագիր  
Սեդրաք Օտապաշեան Բ. " "
- ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ
- Տիարք  
Առաքել Պէրպէրեան  
Կիրակոս Շահրոպեան  
Լևոնդ Միրիճեան  
Ապահ Պետրոսեան  
Գողմոս Մանկիկեան  
Կարապետ Վարդանեան  
" Երզնկացեան

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ՀԱՎԱՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՆ

Կ. ՊՕԻՒՍ 22 Դեկտ. — Բ. Դուռը կը տեղեկանայ թէ՛ իրումը մը հայեր չէ. քեանքի գիւղաքաղաքին վրայ արշաւած են :

Թուրք զօրաց շուկատ մը յարձակելով անոնց վրայ, հինգ հոգի սպաննած և 18 հոգի վիրաւորած է, մնացեալներն ալ գէպ ի Պարսկական սահմանագլուխը ետ մղուած են :

ՓԱՐԻՉ 29 Դեկտ. — Ճրանտական կառավարութիւնը 120 միլիօն ֆրանք պիտի յատկացնէ Ճրանտայի ծովեզրները և գաղթային վայրերը պաշտպանելու համար :

ՏԻՒՐՊԱՆ 30 Դեկտ. — Անգղիական յաճախորդ մը Տէլափօս ծոցին մէջ գերմանական նաւ մը բռնեց և Տիւրպան բերաւ : Այս նաւը Պիւնտեգրաքի, մաքսախոյզական միջերը ունեցած ըլլալ կը կարծուի :

ԲԻԵԹՕՐԻԱ 30 Դեկտ. — Մէքսիկի բերդապահները դուրս ելլել փորձեցին՝ բայց ետ մղուեցան 109 մարդ կորսնցնելով : Կը հաւատեն թէ վիրաւորեալներու շարքին մէջ է նաև Լորտ Սալպուրի օրդին :

ՔԱՓ 1 Յունի. 1900— Ժէնէրալ Ֆրէնչ կատարեալ յաղթութիւն մը տարաւ Պօէրներու վրայ ու գրաւեց Քօլէսպուրկը :

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Բ. Վսեմութիւն Խտիւր, իր Գահակալութեան 9րդ. տարեդարձին առթիւ յառաջիկայ Յունուար 8էն սկսեալ Ապտիւնի պալատին մէջ ընդունելութիւններ պիտի ընէ :

— Աղեքսանդրիոյ Հայ Բարեգործական ընկերութեան ի նպաստ թատերական ներկայացում տալու ձեռնարկին համար, միջազգին մասնաժողով մը կարգուած է, որուն Ատենայեան է՝ Նիքօլա Ապէ, փոխատենայետ՝ Զարեհ Սիվազլի, անդամներ՝ Բաուլ Բանիվէ, Տիմիթրի Գարալի, Ալֆրէտ Գամիո :

Քարտուղար, Երուանդ Տէրվիչեան, Ֆրանսագէտ երիտասարդը :

Շնորհաւորութիւն և յաջողութիւն այդ ազնիւ ձեռնարկի մասնակցող անդամներուն :

#### Դէ՞՞ Ի ԹՐԱՆՍՎԱԼ

Մարտիլիայէն դէպ ի թրանսվալ մեկնած են բազմաթիւ կամաւոր զինուորներ : Մեկնողներու մէջէն մասնաւոր ուշադրութիւն գրաւեցին ռուս սպայներն, որոնք բազմաթիւ էին. յիշենք Կուռքօ հազարապետն որ Ռուս կառավարութեան նուիրակն է՝ Հարաւ-Ափրիկեան պատերազմին համար, գնդապետն Փօքրովքի, Օկրեսթօֆ և Տիւաթրօֆօֆ տեղապահներն, այս վերջին երեքն իրենց անձնական ծախքով մեկնեցան :

Այս սպայներու ըսածին նայելով Ռուսաստանի մէջ մեծ շարժում կայ ի նպաստ Պօէրներու : Ամէն օր հրամաններ կը խընդրուին թէ՛ սպայներէ և թէ՛ պարզ զինուորներէ թրանսվալ երթալու :

Փօքրովքի գնդապետն հաւաստած է թէ Լօնկիթովքիցի փարթամ լեհացի մը, երեք հարիւր կամաւորներէ բազկացեալ խումբ մը կը կազմէ, իւր ծախքերով թրասվալ զրկելու համար :

— Կազէք Տրանսօրթի Կ. Պօլէն կը հաղորդուի թէ՛ Սուլթանը Փարիզի Օսմանեան դեսպան Միւնիթր պէյին յանձնարարած է բանակցութեան մտնել Մահմետ փաշայի հետ, զինք Պօլիս վերադարձնելու համար : Սուլթանը այս նպատակին համար

50,000 ոսկեոյ մեծկակ գումար մը գրած է հրապարտութիւն տրամագրութեան տակ :

— Կ. Պօլսոյ Ռուսակ մը դեսպանին մէկ նոր զեկոյցին վրայ, Բ. Դուռը խոստացաւ մինչև Յունուար 13 վճարել պատերազմական տուգանքը, զոր դեռ կը պարտի Ռուսիոյ Յետեմալներու գումարն է 170,000 օսմանեան ոսկի :

— Տր. Վարնօքի տեղեկագրութիւնը կ'իզրակացնէ որ՝ Բուէն Սէյֆ-է-Տին Monie de la persécution բռնուած է :

— Սուլթան Ապտիւլ-Ազիզի որդին Շէվքէթ էֆէնտի, տասնօրեայ հիւանդութենէ վերջ անցեալ շարժու կնքած է իւր մահականացուն 28-30 տարեկան հասակին մէջ :

Յուդարկաւորութեան հանդէսը հետեւեալ օրը կատարուած է՝ և վարչական, կրօնական, զինուորական մեծամեծները, ինչպէս նաև Դեսպանատանց թարգմանները՝ և ոչ մահմետական համարակալութեանց կրօնական պետերը, ընդ որս և Օրմանեան պատրիարք իր գործակատար Տիգրան էֆէնտիի հետ՝ կայս. պալատ փութացած են իրենց ցաւակցութիւնը յայտնելու :

Երրօրեայ վեհապետաց կողմէ ցաւակցական հեռագիրներ հասած են :

#### ՊՕԷՐՆԵՐՈՒ ԺԻՇԻ ԹԻԻԸ .

Պօէրներու վրայ բազմաթիւ աշխարհահամարներ հրատարակուած են : Անոնցմէ և ոչ մէկն մեզ բաւարարութիւն կ'ուտար. գրեթէ ամենքն ալ մօտ չորս հարիւր հազար հօլանտական ցեղէ անձինք կը գտնեն Բարաւ. Ափրիկէի մէջ :

Այս թիւն մեզ շատ փոքր կ'երևար : Ահաւասիկ նոր աշխարհահամար մ'ալոր մեզ աւելի ճշդութեան մերձենալ կը թուի : Յետագայ թիւերն մեզի հայթայթած է Պր. Լըբատ, որն երկար ժամանակ ապրած է թրանսվալի մէջ և որ աւելի մանրամասն կերպով ուսումնասիրած է այդ երկիրն : Պր. Լըբատ Լիօնի քաղաքական խնդրակալան ընկերութեան անդամաց առջև Հարաւ-Ափրիկեան պատերազմին վրայ բանաստեղծութիւն մը ըրած է, ուրկէ կը քաղենք հետեւեալ թիւերը .

Հրուանդանի գաղութն	360,000	հոգի
Թրանսվալ	150,000	"
Օրանժ	100,000	"
Նաթալ	40,000	"
Գումար	650,000	"

— Լորտ Սայգլուրի նամակ մը հրատարակելով Անգլիական թերթերուն մէջ, շնորհակալութիւն կը յայտնէ ամեն անոնց, որոնք համակրական արտայայտութիւններ ցոյց տուած են իրեն, կնոջը մահուան առթիւ :

— Պէլլրատէ կը հեռագրեն առ Կազէք Տր. Քօլօնէր թէ, յանուն Միլան թագաւորի հրամայուած է պատերազմական գործոց նախկին նախարար Պ. Ստանքովիչի որպէսզի Սերպիական հողէն մեկնի : Ստանքովիչ պատասխանած է թէ, միայն զինու. զօրութեան առաջ տեղիպիտի տայ, հակառակ պարագային չ'պիտի ուզէ թողուլ իր հայրենիքը :

— Ռուս գրամատեններու խումբ մը, տեղւոյն ռուսական հրապարտարանէ պաշտպանուած, Բ. Դուէն պահանջած է Ղարսի և Կարինի միջև կառուցուելիք երկաթուղւոյ մենաշնորհը : Այս մասին կատարուած հաղորդակցութիւնք գաղտնի կը պահուին :

— Տէյի Նիզլի փարիզի լղջակիցը կը գրէ թէ՛ Պրանսական կառավարութիւնը հրամայած է փարիզեան լրագրատնայաններուն, թէ պիտի գրաւուին գաղթական ինչպէս նաև. դերմանական այն թերթերը՝ որոնք Անգլիոյ թագուհւոյն հեքնական պատկերները (ձաղրանկար) կը պարունակեն :

Կառավարութեան այս որոշումը Վալտէք-Ռուսոյի կը վերագրուի :

Տէյի-Նիզլի խօսելէ վերջ այս մասին, կըսէ թէ, Չէմպրէյնի այդ սպառնական շարժումները անարդարանալի են և թէ՛ Ֆրանսական կառավարութեան ձեռք առած այս միջոցները ցոյց կուտան թէ՛ Պրանսա փափաքող է բարեկամական յարաբերութիւններ մշակել Անգլիոյ հետ :

— Լինչի օրէնքը. — Նիւ-Եօրքէն կը հեռագրեն թէ՛ Լինչի օրէնքը նոր զոր մը ևս տարած է : Ի Մէյսֆիլտ (Քէնթուքիի մէջ) սե մը՝ փորձած է սպիտակ կնոջ մը պատիւը բռնաբարել ու սպաննել և ձերբակալուած է :

Նոյն երեկոյն ինկ, հազար հզուցչափ բազմութիւն մը խուժած են անոր գտնուած բանտին վրայ և պահապանները մէկ կողմ ընելով, խցիկէն դուրս քաշած և քաղաքէն դուրս տանելով ծառի մը կապած են :

## ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԾԽԱՐՅԻ ԱՄԵՆԸՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ Ի ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի չահարածինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար առիթ է :

Ս. ԼԷՈՒՍՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէն աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գտնուի :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. Վաղեքսանդրիա :

Ահանջները կտրել վերջ, քիչ կրակով այրած են զայն:

Տանջանքը սոսկալի եղած և չորս ժամ տևած է: յաջորդ օրը, անոր ամբողջովին անխացած դիակը գետը նետած են:

Կառավարութեան կողմէ ձերբակալման ո'ւնէ հրաման ելած չէ:

ՆՈՐԱԿԱԶՄ

ՇԱՀԱՍ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ԳԱՀԻՐԷ  
Հաստատուի 1 Յունուար 1899

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ

Ռնամանայ գործառնութեանց, սկսեալ Ապրիլէ մինչ 31 Դեկտ. 1899.

ՄՈՒՏՔ

Ընկ. մտից և ամսավճարներու գանձումէ գոյացած . . . . .	34290	—
Չանազան հասոյթ . . . . .	747	70
Գումար . . . . .	35037	70

Ե Լ Ք

Գնուած 33 հատ Եգիպտ. Բրէտի Ֆոնդի սիէի պարգեւատու պարտատոմսերու արժէքն . . . . .	33982	70
Չանազան ծախս . . . . .	711	—
Պատրաստի դրամ . . . . .	344	—
Գումար . . . . .	35037	70

Վերոյիշեալ 33 հատ Եգիպտ. Բրէտի Ֆոնդի պարտատոմսերու թիւերն են. 122092—93—94—95, 142866—867—868—870, 144916—917—918—920, 148548—549—550—551—552, 153245—246—247—248—249, 156803—804—805, 158912—913—914, 159046—47, 161175—176—177.

Վասն ճշգրտութեան կ'ստորագրելքս:  
Ի զիմաց Ընդհ. Ժողովոյ Դիւանի,  
Գ. ԳՄԳՄԵԱՆ, Ատենայետ,  
Ա. ՊԷՐՊԷՐԵԱՆ, Ա. ՊԷՐՊԷՐԵԱՆ  
Գահիրէ, 2 յունուար 1900

ՔԱՍՈՒԼԵԱՃԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Շնորհիւ համբաւուոր հայ բժիշկ Տր. Մախոսեանի, Պ. Ֆասուլեանի փոքր ի շատէ կազդուրուելով՝ նոր տարիէն սկսեալ կը պատրաստուի ներկայացնել հետեւեալ թատերախաղերը Տանկերեմ լեզուաւ:


- ԱՐԲԱՅԸ ԶԲՕՆՈՒ (Վիքթոր Հիւկոյի)
- ՆԵԼԻ ԱՇՏԱՐԱԿԸ (Ալէքսանդր Տիւմայի)
- ՏՕՆ ՍԷՉԱՐ ՏԸ ՊԱՉԱՆ (Վիքթոր Սէփուրի)
- ԲԱՐԻՉՈՒ ՀՆԱՎԱՃԱՌԸ (Ա. Կ. Ի)
- ՅՈՎԱՆՔ ԳԵՂԵՑԻԿ (Ալֆրէտի)
- ՕԹԷԼԼՈ (Շէյքսպիրի)
- ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ ՀԻՒՆԴԸ (Մօլիէրի)

Հասարակութեան ցոյց տուած համակրութեան և կարողութեան, հայ խումբին հետգհտէ զարգանալ և ստուրանալը. մեծ յոյս ունինք թէ հայ հասարակութիւնը պիտի ուզէ քաջալերել համակրելի դերասանը, որոյ ընտրած ասպարէզը իր կեանքը արժած է . . . :

Վ. Ա. ՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ

ՇԱՐԷ. Ա. ՊՏԻԻ. Ա. ՉԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալով, թէյի ճաշակն և նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն կրկարատե և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձրմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց դերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պօլտոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարի մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն ԲՆԵՐՈՒ ՏԵՍԱԿԻ, ԿՈՒՅԻ և զնոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած կ'ԱՆԻԻԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

6 — 50

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 31 Դեկտեմբեր 1899

Ա. Թիւ	4257	շահած է Ֆրանք	1000
Բ. " "	3094	" "	200
Գ. " "	5983	" "	100
Դ. " "	2250	" "	50
Ե. " "	7973	" "	50

Հետեւեալք 23 ական ֆրանք կը շահին

4155	4158	5864	2708	4948	2466
2292	6709	3052	1741	6965	2404
1894	6321	9696	8107	1827	3268
	6008	436	5339	3688	

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐՊԷՆԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՄԻԻՇԵԱՆ

Վ. Ա. ՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՖՕՆՕԿՐԱԾ

Գ. Ա. ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐԷ  
Ս. և Ս. Սեմալիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և բոնուսի ընտիր տեսակէ բանալիներու մեծ մթերք:

ԴԻՄԵՅԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, ադամանգազարդ, ոսկի, արծաթ և ցիւրի:

Ֆրանսական և ամերիկեան արարանայնման նախնոր տեսակներէն զարդեղէններ, օղբաներ, օղեր, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ

44—50

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԴ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն սղծառ մնալու միակ միջոցն է՝ գիմել:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Փոօզի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-Էլ-Պեմաթի ցիւց դիմացը

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխաղախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջապէս ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ ևայլն:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. թիւն եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

49—50

Le Gérant Dr A. S. MAGOPHAN